

ՄԱԼԱԹԻԱՅԻ ԲԱՐԲԱՌԻ ՀՈԼՈՎՈՒՄՆ ՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

Թ. Ս. ԳՈՒՆԻՆՅԱՆ

Մալաթիայի բարբառը ղեռնս գիտական ուսումնասիրության չի ենթարկված: Առաջին անգամ այդ բարբառի մասին տեղեկություններ են տրվել Պոլսի «Բիրական» հանդեսում, 1898 թ.: Դրանք ամփոփում են 22 առածներ և հանդիսանում են տպագիր առաջին նմուշները տվյալ բարբառով: Նույն հանդեսում, 1899 թ. հրատարակվեց մալաթիացի պրոֆ. Մ. Որբերյանի «Մալաթիա» ակնարկը, որտեղ «Քիչ մը լեզվական» ենթագլխում հեղինակը որոշ տվյալներ է հաղորդում այդ բարբառի մասին: Հիմք ունենալով «Բիրական» հանդեսի տեղեկությունները, հայ անվանի լեզվաբան և բարբառագետ, ակադեմիկոս Հ. Աճառյանը իր «Հայ բարբառագիտություն»¹ աշխատության մեջ Մալաթիայի բարբառը դիտում է որպես ԿԸ ճյուղի բարբառ և տալիս նրա համառոտ ուրվագիծը: Հետագայում, երբ Սփյուռքից 1946—47 թթ. Սովետական Հայաստան ներգաղթեցին հայերը, որոնց մի մասը մալաթիացիներ էին, Հ. Աճառյանն անձամբ զբաղվեց Մալաթիայի բարբառով: 1951 թ. հրատարակված «Հայոց լեզվի պատմություն» աշխատության երկրորդ հատորում անվանի լեզվաբանը նշել է, որ Մալաթիայի բարբառում ա մասնիկով կազմվում են շարունակական ներկա և շարունակական անցյալ ժամանակներ (փէրիմ ա, փէրէյի ա)²:

Մալաթիայի բարբառի ուսումնասիրությամբ զբաղվել է նաև ակադեմիկոս Արարատ Ղարիբյանը: Իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ նա նույնպես բնորոշում է Մալաթիայի բարբառի՝ ԿԸ ճյուղին պատկանելու տեսակետը: Սակայն միաժամանակ ենթադրում է, որ Մալաթիայի բարբառը հավանաբար պատկանել է ՀՈ ճյուղին, ապա ենթարկվել է ԿԸ ճյուղի բարբառների ազդեցության, իսկ ահա <հա> ա մասնիկը թողել է շարունակական ձևեր արտահայտելու համար՝ նշված աշխատության մեջ պրոֆ. Ղարիբյանը տվել է Մալաթիայի բարբառի ձևաբանության մի համառոտ ուրվագիծ, որն ընդգրկում է անձնական զերանունների հոլովումն ու գրել >քրրէլ բայի խոնարհումը սահմանական եղանակի ժամանակներով: Պրոֆ. Ղարիբյանը գտնում է, որ ա մասնիկը գործածվում է նաև ներկայի և անցյալ անկատարի ժխտականը կազմելիս:

Ինչպես Հ. Աճառյանը, այնպես էլ Ա. Ղարիբյանը չեն բացահայտել Մալաթիայի բարբառի քերականության օրինաչափությունները, քանի որ նրանց ուսումնասիրությունները այդ նպատակը չէին հետապնդում. նրանց նպատակն էր պարզել Մալաթիայի բարբառի տեղը հայ բարբառների դասակարգման սխեմայում:

1 Հ. Աճառյան, Հայ բարբառագիտություն, Մոսկվա—Նոր-Նախիջևան, 1911, էջ 193:

2 Նույնի Հայոց լեզվի պատմություն, հատ. 2, Երևան, 1951, էջ 324:

3 Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, 1953, Երևան, էջ 443:

4 Նույն տեղում, էջ 443—447:

1961 թ. Կահիրեում լույս տեսավ Ա. Ալլուդյաճյանի «Պատմություն Մալաթիո հայոց» ստվարածավալ աշխատությունը, որի լեզվաբանական բաժնում ամփոփված են տվյալ բարբառի վերաբերյալ հրապարակի վրա կղած տվյալները: Այսպես որոշ տեղեկություններ են հաղորդվում Մալաթիայի բարբառի հոլովման և խոնարհման մասին:

Մալաթիայի բարբառի ուսումնասիրությունը առաջնահերթ խնդիր է, որովհետև այն կորցրել է բնօրրանը և մնացել որպես մի քանի տարիքավոր մալաթիացիների «սեփականություն»:

Այս հոդվածով նպատակ ունենք ներկայացնել Մալաթիայի բարբառի հոլովման և խոնարհման ընդհանուր օրինաչափությունները:

ԴՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Հոդնակիի կազմությունը.—Մալաթիայի բարբառի հոդնակին հիմնականում կազմվում է -լը և նլը մասնիկներով, որոնցից առաջինը զործածական է միավանկ, իսկ երկրորդը՝ բազմավանկ բառերի համար: Օրինակ՝ աշք>աշկ-աշկէր, կով>գով-գովէր, աղբիր>տխփիր-ախփիրէն, աղիւս>աղօս-աղօսէր և այլն: Ստոր վոխառությունների հոդնակին կազմվում է նույն սկզբունքներով:

Բացի -լը և նլը հոդնակեղտ մասնիկներից, որոնք ընդհանուր են արդի հայերենի համար, Մալաթիայի բարբառը ունի նաև սակավ զործածական մի շարք այլ մասնիկներ, որոնք զրվելով զոյականների կամ զոյականաբար զործածվող այլ խոսքի մասերի վրա՝ արտահայտում են հավաքական իմաստ կամ ցույց են տալիս ազդակցություն, խնամակցություն և այլն: Այդ մասնիկներն են. ստան-մաղնէստան «մատներ», քողէստան «զոտիներ», էֆէստան «այգիներ»:

աւֆ-. ցիյանք, ախփրրանք, հօրքրանք և այլն.

ղանֆ-. օսկրրղանք, փրսօրղանք, ախփրրղանք և այլն.

ոլֆ-. զոնղլֆ (կնիկղնֆ) «կանայք», արիզղէք, դարքրղէք և այլն.

ի-. մալաթիացիք, սրվասցիք, քէղացիք և այլն.

օնֆ-. քոռօնք (քեռոնք), բարօնք, դաղօնք և այլն.

լնֆ-. մամէնք, փարսէղէնք, ամուլէնք և այլն:

Գրաբարյան և վերջնահանգ ունեցող բառերը բարբառում կորցրել են այդ հանգը: Նրանց հոդնակին կազմվում է հետևյալ ձևով. բազմավանկ զոյականները իրեն կանոն ստանում են նլը՝ ցրմարնէր, սրսառնէր, ըղունղնէր և այլն:

Գրաբարյան և հանգ ունեցող միավանկ զոյականների հոդնակիի համար կարևոր է, թե այդ հանգից առաջ զոյականն ինչ հնչյունով է վերջանում: Այսպես՝ ս-ից առաջ ո հնչյունի առկայության դեպքում այդ կարգի միավանկ զոյականները հոդնակիում ունեն նլը, այսինքն վերականգնվում է ն հանգը. ապա բառն ստանում էր հոդնակերտը. օրինակ՝ բեռն>փառ-փառնէր, զուռն>թօռ-թրոնէր, թռոն>թօռ-թօռնէր, լեռն>լեռն>լառ-լառնէր: Այս բառերի նմանակությամբ էլ ծառ-ծառ բառի հոդնակին կազմվում է ն հանգի հավելմամբ՝ ծառնէր:

Ն հանդից առաջ այլ հնչյունների առկայության դեպքում միավանկ զոյականների հոգնակին կազմվում է ընդհանուր սկզբունքով, այսինքն՝ զոյականներն ստանում են էր հոգնակերտը. այսպես՝ ակն > աղ-աղէր, ծունկն > ծունկ-ձանկէր, մուկն > մուկ-մուկէր, մատն > մաղ-մաղէր, հիմն > հիմ-հիմէր: Այս դիրքում ն հանգր վերականգնվում է միայն մասն > մաս «մասունք» բառի հոգնակիում՝ մասնէր:

Բարդ բառերի հոգնակիի կազմության համար կարևոր նշանակություն ունի, թե այդ բառի հիմնական իմաստը որ բաղադրիչի միջոցով է արտահայտվում: Եթե այն արտահայտվում է առաջին բաղադրիչի միջոցով, հոգնակիում բառն ստանում է -էր հոգնակերտը: Բառի հիմնական իմաստը երկրորդ բաղադրիչով արտահայտվելու դեպքում զոյականը ստանում է սէր վերջավորությունը՝ ժանդօշէր «ժամակօշներ», բայց՝ ախշօռէր (աղաջեր), փաղ-մաղէր (փակմատեր) — «բթամատեր» և այլն:

Մարմնի զույգ անդամներ ցույց տվող մի շարք բառեր, էր և նէր մասնիկներով ձևերին զուգահեռ հոգնակի են կազմում վրնէր մասնիկի միջոցով՝ աշվրնէր, մաղվրնէր, ցառվրնէր և այլն: Այսպիսի կազմությամբ հոգնակիները արտահայտում են հավաքական իմաստ:

Հ ո լ ո վ ն ե ռ և հ ո լ ո վ ու մ ն ե ռ. — Բարբառն ունի 6 հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, ոտրծիական: Ուղղական և հայցական հոլովները ձևով նման են իրար՝ անկախ այն բանից, թե տվյալ զոյականը ինչ է ցույց տալիս՝ իր թե անձ: Որոշյալ առմամբ զործածվելիս սեռական հոլովը ստանում է հոդ (ն կամ ն) և նմանվում տրականին: Հայցական հոլովը կիրառվում է նաև ներգոյական հոլովի իմաստն արտահայտելու համար. օրինակ՝ թրբօցըր թաս սօրվի յա աղալրոցում դաս է սովորում: Բացառական հոլովը կազմվում է է(էն), մէ(մէն) վերջավորություններով, որոնք ընդհանուր են արեւմտահայ զրական հայերենի և ՎՍՂ ճյուղի շատ բարբառների համար:

Գործիական հոլովի վերջավորությունն է -օլ(մօլ): Հայտնի է, որ զրաբարում ալ (օլ) վերջավորություն ունեին ա, ր-ա վերջադրական, ո-ա խառը հոլովման պատկանող բառերը հոգնակի թվում: Մալաթիայի բարբառում զրաբարի գործիականի այդ հոլովաձևը ընդհանրացել է և տարածվել բոլոր հոլովումների վրա՝ եզակի և հոգնակի թվում: Նույնիսկ -էլ, դէլ, սաաւն, դաււն, էւն, օնն, աւն վերջավորությունների միջոցով հոգնակի կազմող և հավաքական իմաստ արտահայտող զոյականները, ինչպես նաև ղերանուններն ու զոյականաբար զործածվող այլ խոսքի մասերը գործիական հոլովում ունեն -օլ (մօլ) վերջավորություններ, որոնցից առաջինը՝ սօլ, բնորոշ է ազգակցություն և խնամակցություն ցույց տվող զոյականների, իսկ երկրորդը՝ օլ, անձ ցույց տվող մյուս զոյականների և իրի առմամբ զործածվող բոլոր զոյականների համար:

Գործիական հոլովի վերջավորությունն է -օլ(մօլ): Հայտնի է, որ զրաբարում ալ (օլ) վերջավորություն ունեին ա, ր-ա վերջադրական, ո-ա խառը հոլովման պատկանող բառերը հոգնակի թվում: Մալաթիայի բարբառում զրաբարի գործիականի այդ հոլովաձևը ընդհանրացել է և տարածվել բոլոր հոլովումների վրա՝ եզակի և հոգնակի թվում: Նույնիսկ -էլ, դէլ, սաաւն, դաււն, էւն, օնն, աւն վերջավորությունների միջոցով հոգնակի կազմող և հավաքական իմաստ արտահայտող զոյականները, ինչպես նաև ղերանուններն ու զոյականաբար զործածվող այլ խոսքի մասերը գործիական հոլովում ունեն -օլ (մօլ) վերջավորություններ, որոնցից առաջինը՝ սօլ, բնորոշ է ազգակցություն և խնամակցություն ցույց տվող զոյականների, իսկ երկրորդը՝ օլ, անձ ցույց տվող մյուս զոյականների և իրի առմամբ զործածվող բոլոր զոյականների համար:

Ծիշտ է, գործիական հոլովում -օլ վերջավորություն ունեն նաև այլ բարբառներ, օրինակ՝ Պոլսի, Արարկիթի և այլն, սակայն այդ վերջավորությունը նշված բարբառներում զործածական է կամ առանձին ոճերի և արտահայտությունների մեջ, կամ էլ հանդես է գալիս իբրև զրաբարյան վերապրուկ:

Մինչդեռ Մալաթիայի բարբառում գործիական հոլովի այդպիսի կազմությունը ներկայացնում է մի ամբողջական և կոտ օրինաչափություն: Ներդո-

յական հոլովի իմաստն արտահայտվում է հայցական հոլովով կամ սեռական հոլովով խնդրի ու մէջ մէջ կապի միջոցով: Օրինակ՝ թրբօցր թաս սօրվի յա «գպրոցում դաս է սովորում», քիբքին մէջ «գրքում», էքին մէջ «այգում» և այլն:

Հ ո լ Վ ո Վ ու մ ն ե ր.—Հոլովումները որոշվում են եզակի թվի սեռական հոլովի վերջավորութեամբ, որը հանդես է գալիս որպէս հոլովիչ: Մալաթիայի բարբառն ունի հետևյալ հոլովումները. ի, ու, աւ, օշ, օւ, վա և գրաբարատիւ: Հոգնակի թվում բոլոր գոյականներն ու գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերը հոլովվում են ու հոլովմամբ:

Ի հ ո լ Վ ո Վ ու մ.—Մալաթիայի բարբառում ի-ն ամենատարածված և ամենագործուն հոլովումն է: Նույնիսկ շուն, տուն, ձուկ, մուկ, աղջիկ, բնկեր, բառերը, որոնք գրաբարում և արդի հայերենում ենթարկվում են այլ հոլովումների, այս բարբառում պատկանում են ի հոլովման: Բացի այդ, հարակատար և ենթակայական դերբայները գոյականաբար գործածվելիս, ինչպէս նաև փոխառյալ բառերի մեծ մասը, նույնպէս հոլովվում են ի հոլովմամբ:

Այդ հոլովման գոյականները եզակի թվի սեռական և տրական հոլովներում ունեն ի վերջավորություն: Հայցականը նման է ուղղականին: Բացառականի և գործիականի վերջավորությունները կազմվում են վերը նշված հիմունքներով:

Հոլովման ընդհանուր պատկերը

Խօսք>խօսկ, քար>քար, աղջիկ>ախչին, մարգարիտ>մարքրիդ,
ղրած>քրրած, գրող>քրրօղ

Ն զ ա կ ի

Ուղղ. հայց.	խօս(կ)ր	քար(ր)	ախչին(ր)	մարքրիդ(ր)	քրրած(ր)	քրրօղ
Սեռ. տրակ.	խօսկին	քարին	ախչինին	մարքրիդին	քրրածին	քրրօղին
Բաց.	խօսկէն	քարէն	ախչինէն	մարքրիդէն	քրրածէն	քրրօղէն
Դործ.	խօսկօք	քարօք	ախչինօք	մարքրիդօք	քրրածօք	քրրօղօք

Հ ո զ ն ա կ ի

Ուղղ. հայց.	խօսկէր(ր)	քարէր(ր)	ախչինէր(ր)	մարքրիդնէր(ր), քրրածնէր(ր)
Սեռ. տրակ.	խօսկէրուն,	քարէրուն,	ախչինէրուն,	մարքրիդնէրուն, քրրածնէրուն
Բաց.	խօսկէրէն,	քարէրէն,	ախչինէրէն,	մարքրիդնէրէն, քրրածնէրէն
Դործ.	խօսկէրօք,	քարէրօք,	ախչինէրօք,	մարքրիդնէրօք, քրրածնէրօք

Ի հոլովման են ենթարկվում նաև՝

ա) գրաբարյան ի վերջավորվող բառերի մեծ մասը (մնացածները ենթարկվում են աւ հոլովման), ինչպէս՝ ակն>ազ, ծունկն>ծունգ, կաթն>զաթ և այլն:

բ) Բառավեցում ալ>ա ունեցող բառերը, որոնք բաժանվում են երկու խմբի: Առաջին խմբի բառերը եզակի սեռականում պահում են բառավերջի ալ>ա-ն: Սրանց հոգնակին կազմվում է միայն նկ- հոգնակերտի միջոցով. օրինակ՝ ամիրայ>ամիրա-ամիրանէր-ամիրայի(ն). արզա-արզանէր-արզա-ի(ն), հաքուքա-հաքուքանէր-հաքուքայի(ն) «ագուգա, փողորակ» և այլն: Երկրորդ խմբի բառերը բառավերջի ալ>ա-ն կարող են սղել կամ պահել: Այսպես՝ տղայ>ղղա-ղղին կամ զրգային, փեսայ-փէսա-փէսին կամ փէսային, ջամփա-ջամփին կամ ջամփային և այլն: Այս խմբի առանձնահատկությունն այն է, որ սրանք հոգնակի կարող են կազմել ն' նկ- մասնիկով, ն' հավաքական խմաստ արտահայտող է՛ մասնիկով (ղղանէր, փէսանէր և զրդէք, փէսէք և այլն):

Ու հոլովում.— Այս հոլովման առանձնահատկությունն այն է, որ եզակի սեռական-տրական հոլովներում գոյականներն ստանում են ու վերջավորու-թյուն:

Ու հոլովմամբ են հոլովվում բոլոր գոյականները հոգնակի թվում:

Հոլովման րեղհանուր պատկերը

	Ե զ ա կ ի		Հ ո գ ն ա կ ի	
Ուղղ. հայց.	գով(ր)	բար(ր)	գովէր(ր)	բարէր(ր)
Սեռ. տրակ.	գովուն	բարուն	գովէրուն	բարէրուն
Բաց.	գովէն	բարէն	գովէրէն	բարէրէն
Գործ.	գովօք	բարօք	գովէրօք	բարէրօք

Այդ հոլովման են պատկանում՝

1. Գրաբարյան ո կամ ու վերջադրական հոլովման պատկանող հետևյալ բառերը՝ ամիս>ամիս, աստուած>ասված, գլուխ>քրլօխ, գող>քօղ, էշ>էշ, ժամ>ժամ, լոյս>լօս, կով>գով, հայ>հայ, հով>հօվ, հորթ>հօրթ, մարդ>մարթ, պասլ>բար (անէրբար, հրեքարբար և այլն), ցաւ>ցավ, փոր>փօր: Տէր>դէր (տէրտէր>դերդէր) բառը բարբառում անցել է ու հոլովման տակ: Աստուած>ասված բառի թեք հոլովներում վերականգնվում է արմատի տ հնչյու-նը: Այսպես՝ աստուածուն, աստուածեն, աստուածօք:

Ժամանակ ցույց տվող ամիս բառը սովորաբար հոլովվում է աա հոլով-մամբ: Ու հոլովմամբ այն կիրառվում է առանձին ոճերի և արտահայտություն-ների մեջ:

2. Խ-ով վերջացող բառերը. ինչպես՝ ագի>արի, ածելի>ածրլի, ալգի>էրի, անօթի>անօթի, գարի>քարի, դինի>քինի, մատանի>մաղնի և այլն:

3. Ացի, եցի, ցի ածանցներով կազմված բառերը՝ մալաթյացի, բօլսէցի, սրվասցի, գէղացի, քաղքցի և այլն:

4. Զրադմունք, արհեստ ցույց տվող ջի>չի ածանցով կազմված փոխառ-յալ բառերը՝ սրվաղչի, փինաչի և այլն:

Հոլովման րեղհանուր պատկերը

	մատանի>մաղնի	անօթի>անօթի
Ուղղ. հայց.	մաղնի(ն)	անօթի(ն)
Սեռ.-տրակ.	մաղնուն	անօթուն
Բաց.	մաղնիլէն, մաղնէն	անօթիլէն, անօթէն
Գործ.	մաղնիլօք, մաղնօք	անօթիլօք, անօթօք

Քանի որ -ստան հոգնակերտով կազմված բառերի հոգնակի իմաստը մթազնվել է, ուստի նրանք -նէր վերջավորութիւն միջոցով հոգնակի կազմելով՝ հոլովվում են ու հոլովմամբ։ Այսպես՝ մազնէստանէր, մազնէստանէրուն, մազնէստանէրէն, մազնէստանէրօք։

Նույն ձևով էլ աւ հոլովմամբ են հոլովվում նաև մարմնի զույգ անգամներ ցույց տվող աշկ, անգաշ, ղղունգ, ձունգ, մաղ, ցառք, օտկ, ունք, ինչպես նաև մաղ, դուն, շուն, դալ բառերը հոգնակի թվում, որոնց հոգնակիութունն արտահայտում է վրնէր-ի միջոցով։

Միմիայն -վրնի հոգնակերտով կազմված գոյականների (աշվրնի, մաղվրնի) հոլովումը գործածական չէ։

Աւ հոլովմամբ են հոլովվում նաև անորոշ դերբայները գոյականաբար գործածվելիս՝ սօրվիր, սօրվիրուն, սօրվիրէն, սօրվիրօք։

Ան հոլովում.— Այս հոլովման ժամանակ եղակի սեռական և տրական հոլովներում գոյականներն ստանում են ան հոլովիչը։ Եղակի բացառական, գործիական և հոգնակի թվի բոլոր հոլովների վերջավորութիւնները բնականորէն են ու հոլովման պատկանող բառերի համապատասխան հոլովների վերջավորութիւնների հետ։

Չնայած դուռն և թոռն բառերը բարբառի ուղղական հոլովում դարձել են նույնանուն՝ թօռ, այնուամենայնիւ հոլովվելիս որոշակի երևում է նրանց տարբերութիւնը։ Հոլովման այս տարբերութիւնը հիմքը դրաբարն է։ Հայտնի է, որ դրաբարում դուռն բառը ենթարկվում էր աւ ներգրական հոլովման, ըստ որում հոլովիչից առաջ արմատի ու-ն շեշտակորույս լինելով սղվում էր՝ դրան։ Երաբարում ներդրական հոլովման պատկանող թոռն բառի եղակի սեռականում արմատի ու-ն մնում է անփոփոխ՝ թոռին։ Թեր հոլովներում արմատի ձայնավորների այդ հնչյունափոխութիւնները նույնութիւնը պահպանվել են բարբառում. ալսպես՝ զոան>թրոան և թոռին>թօռան։

Ուրին>ուրուն ածանցով կազմված վերացական գոյականների հոլովումը ներդրական բնույթ ունի, այսինքն ուղղական հոլովի ու-ի փոխարեն սեռականում հանդես է գալիս աւ-ն։ Այսպես՝

Ուղղ. հայց.	փարութուն	քէշութուն
Սեռ. տրակ.	փարութան	քէշութան
Բաց.	փարութունէն	քէշութունէն
Դործ.	փարութունօք	քէշութունօք

Սակայն առօրյա և առտնին խոսակցութիւնների ժամանակ նշված բառերը սովորաբար ենթարկվում են ու հոլովման։

Վա հոլովում.— Այս հոլովման պատկանող գոյականները եղակի սեռական-տրականում ունեն Վա հոլովիչը, բացառականում՝ վրնէ կամ է, գործիականում՝ վրնօք կամ օ։

Հոլովման պատկերը

Ուղղ. հայց.	քրշէր(ր)	դէսօր(ր)
Սեռ. տրակ.	քրշերվան	դէսօրվան
Բաց.	քրշէրվրնէն	դէսօրվրնէն
Դործ.	քրշերվրնօք կամ քրշէրօք	դէսօրվրնօք

Վա հոլովման են պատկանում ժամանակ ցույց տվող բառերը:

Օչ հոլովում—Այս հոլովման են ենթարկվում ազգակցություն և խնամակցություն ցույց տվող աներ>անէր, տայգր>դաքրր, նէր>նէր, տալ>դալ, սկեսուր>գէսուր, սկեսրայր>գէսրայր բառերը:

Գրական հայերենում ոչ հոլովման պատկանող բառեր բարբառում ենթարկվում է Խ հոլովման (բնգէրին քիրքը):

Օր հոլովում.—Այս հոլովման ենթարկվող բառերը նույնպես ազգակցություն են ցույց տալիս:

Գրաբարատիւ հոլովումներ.—Այս հոլովման են պատկանում մի քանի տեղանուններ և հավաքական իմաստ արտահայտող այն գոյականները, որոնք ունեն Բ վերջավորություն: Քննենք այդ բառերը.

1) Սի քանի տեղանունների, հատկապես սրբավայրերի անունների սեռական, տրական հոլովներում հանդես է գալիս ա հոլովիչը: Ծիշտ է, այս հոլովումը կազմվել է զրաբարի ա վերջադրական հոլովման նմանակությամբ, սակայն եթե զրաբարում այդ հոլովման էին ենթարկվում մարդկանց հատուկ անունները, ապա բարբառում այն պահպանվել է միմիայն սրբավայրերի անունների հոլովման ժամանակ: Ըստ երևույթին ժամերգությունների կամ կրոնական ծեսերի ժամանակ լսվող սեռական հոլովի ա հոլովաձևը (լուսավորչա, աստվածածնա) գործածվել է բարբառում: Այսպես՝ եթե Թօրօս անունը դիտվում է իբրև մահկանացուի անուն, ենթարկվում է Խ հոլովման (Թորոսին էքին), իսկ իբրև վանքի անուն՝ սրբավայր գործածվելիս ենթարկվում է ա հոլովման, այն էլ սուլորաբար վանք բառի հարադրությամբ (սուրփ Թօրօսա վանք):

2) Գրաբարատիւ հոլովման երկրորդ խմբի բառերը սեռական, տրական հոլովներում ունեն ց հոլովիչը: Այս խմբի առանձնահատկություններն են ա) ուղղական հոլովում բառավերջում անպայման ունեն Կ, բ) հոլովումը հանդես է գալիս միայն հոգնակի թվում: Հետևաբար սրանք անեղական գոյականներ կամ գոյականաբար գործածվող բառեր են, որոնք ցույց են տալիս խնամակցություն, ազգակցություն, կամ էլ արտահայտում են հավաքական իմաստ: Այս խումբը իր հերթին բաժանվում է երկու ենթախմբի.

Առաջին ենթախմբի բառերը ուղղականում ունեն ԼԲ (զրդէք), -դԼԲ (դաքրրգէք), -վրդԼԲ (դավրդէք), ւացիԲ, ԼցիԲ, ցիԲ վերջավորություններ: Նշված խմբի բառերի սեռական-տրական հոլովներում ուղղականի Բ-ն փոխարինվում է ց-ով, իսկ Ի-ից առաջ գտնվող ձայնավորները՝ օ-ով: Այդ բառերն արտահայտում են միմիայն հավաքական իմաստ:

Երկրորդ ենթախմբին են պատկանում հավաքական իմաստ արտահայտող, ինչպես նաև ազդի, տոհմի անուն ցույց տվող այն բառերը, որոնք ուղղական հոլովում ունեն ւանԼ, դանԼ, ԼնԼ, օնԼ վերջավորություններ: Այստեղ հոլովման ժամանակ ուղղականի Բ-ն սեռականում նույնպես փոխվում է ց-ի, սակայն, ի տարբերություն առաջին ենթախմբի, ց-ից առաջ գտնվող ձայնավորները մնում են անփոփոխ:

Բացի վերոհիշյալներից, Բ-ով վերջացող մի շարք անեղական բառեր առանձին արտահայտությունների մեջ պահել են զրաբարյան հոլովաձևերը: Նշենք մի քանի օրինակներ՝ բաղանիք-փաղնից, հարսանիք-հարսնից, աչքաչրց, շլիթ-շրլից, օտկ-օղաց, մորուք-մօրվաց և այլն:

Գրաբարատիւ հոլովման շարքն են դասվում նաև առանձին ոճերի մեջ օգտագործվող օր բառի ավուր հոլովածներ (իրէր ավուր ջամփան, հինգ ավուր հաց) և տալգր դարբը բառի դարէր հոլովածներ (դարէր անունը, դարէր քովը): Վերջինը գրաբարի և ներքին թերման հոլովածների միակ վկայությունն է բարբառում:

Բ Ա 3

Դերբայներ ու նրանց կազմությունը

Բարբառն ունի 6 դերբայ՝ անորոշ, ապառնի, վաղակատար, հարակատար, ենթակայական, ժխտման: Բացակայում է անկատար դերբայը: Ըստ կազմության դերբայները լինում են պարզ և ածանցավոր:

Անորոշ դերբայի վերջավորություններն են. պարզ բայեր՝ էլ (բրբէլ), իլ (հայիլ), ալ (աղալ), ածանցավոր բայեր՝ նէլ (բարնէլ), նիլ (փուսնիլ) և նալ (մառնալ): Ու խոնարհման բայերից մնացել է միայն թողուլ>թողուլ բայը:

Անորոշ դերբայը չի մասնակցում եղանակային ձևերի կազմությանը: Նրա սևռական, տրական հոլովածներ դիմորոշ հոգով և պէս>բէս բառի հարադրությանը զործածվելով՝ ցույց է տալիս զործողության կատարման անմիջականությունը: Օրինակ՝ էրթալուն բէս բաշլայէց ցառէրը վրլալ, զարթալուդ բէս ջաշցա: Հաց փերէլուն բէս շաղանէրը նէրս մրղան և ալլն: Անորոշ դերբայի բացառական հոլովածներ հոգ ստանալով՝ նախադասության մեջ կիրառվում է որպես ձևի պարագա և համապատասխանում է արդի հայերենի զործիական հոլովին: Օրինակ՝ Հաց ուղէլէն գէրթալ յա շուղան «Հաց ուտելով գնում է շուկայ»: Երբեմն էլ այն կիրառվում է որպես պատ. առի պարագա. օրինակ՝ Շաղ վաղէլէն օտկէրը ցալի յա Շշատ վազելուց (վազելու պատճառով) ոտները ցավում են»:

Ապառնի դերբայը նախապես ունեցել է երկու վերջավորություն՝ ու և իլ: Սակայն իլ վերջավորությամբ կազմված ապառնի դերբայում մթաղնվել է նրա դերբայական իմաստը: Այն զործածվում է որպես գոյական կամ ածական. օրինակ՝ հարնէլիբ «հագուստ», խրմէլիբ, ուղելիբ և այլն:

Այսպիսով ապառնի դերբայի վերջավորությունը մնում է միայն ու-ն, որն ավելանում է անորոշ դերբային՝ էրթալ-էրթալու, նէղէլ-նէղէլու և այլն: Ի խոնարհման բայերի ապառնի դերբայը կազմվում է ի խոնարհիչը է-ով փոխելով. այսպես՝ խօսիլ-խոսէլու, հայիլ-հայէլու, փուսնիլ-փուսնէլու և այլն:

Ապառնի դերբայով և օժանդակ բայով կազմվում են սահմանական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակները:

Վաղակատար դերբայի վերջավորությունն է -իբ: Ըստ որում -լ և -ի խոնարհման պարզ բայերը իբ վերջավորությունն ընդունում են ներկայի հիմքի վրա, իսկ ա խոնարհման պարզ բայերը և բայածանց ունեցող բոլոր բայերը՝ անցյալի հիմքի վրա. այսպես՝ բրբէլ-բրբիբ, փէրէլ-փէրիբ, խօսիլ-խօսիբ, հար-նէլ-հարիբ, զարթալ-զարթացիբ, փուսնիլ-փուսիբ, մառնալ-մառցիբ, զարնէլ-զարզիբ և այլն:

Հարակատար դերբայի վերջավորությունն է ած: Այն դրվում է ներկայի կամ անցյալի հիմքի վրա՝ վաղակատար դերբայի կազմության հիմունքներով:

Գալ՝քալ հարակատարը կազմվում է ան վերջավորությունն անորոշ դերբալին ավելացնելով՝ քալած:

Դրվելով որևէ գոյականի վրա՝ հարակատար դերբայը կիրառվում է ածականի (որոշիչի) իմաստով և գրվում է գոյականից առաջ: Օրինակ՝ փէրած խօղերնիս, բրբած նամագրդ, վրլացած լաթէրնին և այլն:

Հարակատար դերբայը հարադրվելով օժանդակ բայերի հետ՝ կազմում է սահմանական եղանակի հարակատար և անցյալի հարակատար ժամանակները:

Հարակատար դերբայի իմաստ են արտահայտում նաև ուն (վուն) ածանցով կազմված բայերը. օրինակ՝ հուսվուն (հյուսված), քողցրվուն, էփուն (եփած), փանվուն, զօփվուն, լէցուն, լառվուն և այլն: Հարակատարի այս ձևը սահմանափակ կիրառություն ունի և սովորաբար գործածվում է ածականի (որոշիչի) իմաստով:

Ընթակայական դերբայի վերջավորությունն է օղ: յէ (ի) խոնարհման բայերի ենթակայական դերբայը կազմվում է ներկայի հիմքից, իսկ ա խոնարհման բոլոր բայերինը՝ անցյալի հիմքից: Այս դերբայը չի մասնակցում բայի եղանակային ձևերի կազմությանը: Նրա կիրառությունը նույնն է, ինչ արդի հայերենում:

Ըղծական կամ ժխտման դերբայը կազմվել է ըղծական եղանակի ապառնի ժամանակի եզակի թվի երրորդ դեմքից և, հետևաբար, ունի ի, է կամ ա վերջավորություններ (խօսի, բրբէ, խաղա): Օժանդակ բայերի հարադրությամբ այն կիրառվում է պայմանական եղանակի ժխտական ձևերի կազմության մեջ: Իայաճիմֆեբի կազմությունը. — Բայերն ունեն երկու հիմք՝ ներկայի և անցյալի: Ներկայի հիմքը լինում է պարզ կամ ածանցավոր, իսկ անցյալի հիմքը՝ արմատական կամ ցոյական:

Ներկայի ճիմֆր կազմվում է անորոշ դերբայից՝ առանց էլ, -ալ, -իլ դերբայական վերջավորությունների: Հետևաբար անորոշ դերբայի ածանցները մտնում են ներկայի հիմքի մեջ. այսպես՝ բրբէլ-բրբ, փէրէլ-փէր, մառնալ-մառն, մօղիգնալ-մօղիգն, բրբվել-բրբվ և այլն:

Ներկայի հիմքի մեջ են մտնում հետևյալ բայածանցները.

ա) սոսկածանցներ. -ան ածանցը, որը սովորաբար լինում է բազմավանկ բառերի երկրորդ վանկում, հնչյունափոխության հետևանքով զրկվել է ա ձայնավորից և մնացել է ն-ն, որն էլ նույնացել է զրաբարյան ն սոսկածանցի հետ: Օրինակ՝ ագանիլ-հաքնիլ, մեռանիլ-մառնիլ, մոռանալ-մառնալ, գտանել-բրգնալ, ցրտանալ-ցուրգնալ և այլն: Լուանալ՝ վրլալ բայը զրկվել է ան ածանցից: Այս ան ածանցը անփոփոխ է մնացել զրական բառերում. այսպես՝ ծերանալ-ձէրանալ, ուրանալ-ուրանալ, խոստովանիլ-խօստովանիլ և այլն: Էն ածանցը նույնպես զրկվել է ն>է ձայնավորից և մնացել է միայն ն-ն. օրինակ՝ կարենալ՝ զրրենալ, վախենալ՝ վախնալ և այլն: Ն սոսկածանցը մնացել է անփոփոխ. ինչպես՝ բառնալ՝ փառնալ, առնուլ՝ առնէլ, առնել՝ էնէլ, դառնալ՝ թառնալ և այլն: Չ սոսկածանցը ընկել է կամ փոխարինվել ն-ով, երբեմն էլ մնացել անփոփոխ. այսպես՝ փախիլ՝ փախնիլ, հանգիլ՝ հանգիլ, հանգչիլ՝ փաղիլ, փաղիլ՝ փաղիլ, փաղիլ՝ փաղիլ և այլն:

բ) Վ ածանցով կազմվում են կրավորական բայեր, իսկ -ցուն ածանցով պատճառական բայեր. օրինակ՝ զարնրվէլ, բրբվէլ, շարթրվէլ, հաքցունէլ, բառգէցունէլ, էվէլցունէլ և այլն:

Անցյալի հիմք. Լ, իլ ղերբայական վերջավորություններով կազմված ածանցավոր բայերի անցյալի հիմքը արմատական է. այսպես՝ հաքնիլ-հաքա, թուքնիլ-թուքի, բաքնիլ-բաքի, թրոնիլ-թրոա, խաղնիլ-խաձի և այլն։ Այլ վերջավորությամբ բոլոր բայերի և Լ (իլ) վերջավորությամբ սլարգ բայերի անցյալի հիմքը ցոյական է. ինչպես՝ աղալ-աղացի, ջրնչալ-ջրնչացի, խաղալ-խաղացի, էրթալ-էրթացի, մառնալ-մառցա, ղրրնալ-ղրրցա, բրբէլ-բրբէցի, հայիլ-հայէցա և այլն։

Երկրայի հիմքից կազմվում են սահմանական եղանակի ներկա, անցյալ անկատար, ապառնի, անցյալի ապառնի ժամանակները, ղղձական, սլայմանական և հարկադրական եղանակները, բոլոր սլարգ բայերի եզակիի բուն հրամայականը և Լ (իլ) խոնարհման սլարգ բայերի վաղակատար և հարակատար ժամանակները։

Անցյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, ա խոնարհման բոլոր բայերի և Լ (իլ) խոնարհման ածանցավոր բայերի վաղակատար և հարակատար ժամանակները, ինչպես նաև ածանցավոր բայերի եզակիի և բոլոր բայերի հոգնակիի բուն հրամայականը։

Գրարարի շորս խոնարհչիներին՝ և ա ի և ու-ի փոխարեն բարբառը հիմնականում ունի երկուսը՝ Լ (իլ) և ա։

Ե և ի խոնարհման բայերի խոնարհչիները եզակի թվի առաջին և երկրորդ ղեմքերում նույնացել են, միայն երրորդ ղեմքում է երևում նրանց տարբերությունը. այսպես՝ քրրիմ, քրրիս, բայց՝ քրրէ, հայիմ հայիս, բայց՝ հայի. թուքնիմ, թուքնիս, բայց՝ թուքնէ, հաքնիմ, հաքնիս, բայց՝ հաքնի. Բարբառի խոնարհումների մեջ գրարարի համեմատությամբ հետևյալ փոխանցումներն են կատարվել։

ա) Է-ն փոխվել է ա-ի հետևյալ բառերում՝ ամաչել > ամբշնալ, գտանել > քրղնալ, ելանել > էլլալ, իջանել > էշնալ, լինել > լլլալ, կարել > կարենալ > քրղնալ, կրճալ > քրջրղալ, ճանաչել > ջաշնալ, մտանել > մրղնալ, տեսանել > ղեսնալ, քնել > քրնանալ։

բ) ու խոնարհումը փոխվել է է-ի՝ գենուլ-գէնէլ, առնուլ-առնէլ, երղնուլ-էրթրմնալ, ուռնուլ-ուռէնալ բառերում։

գ) ի խոնարհման անկանիլ բայը դարձել է ա խոնարհման բայ՝ իշնալ, իսկ ծնանիլ ածանցավոր բայը՝ նույն խոնարհման սլարգ բայ՝ ձրնիլ։

Օժանդակ բայը գրարարի համեմատությամբ հետևյալ փոփոխություններն է կրել։

Ներկա		Անցյալ անկատար	
եմ > իմ	եմք > իք	էի > էիի	էաք > էյաք
ես > իս	էք > էք	էիր > էիիր	էիք > էիիք
է > է	են > էն	էր > էր	էին > էիին

Եզանակներ. — Բարբառն ունի բայերի խոնարհման հինգ եղանակ՝ ղղձական, սահմանական, սլայմանական, հարկադրական և հրամայական։

Բղձականը գրարարի նշված ժամանակների համեմատությամբ հետևյալ փոփոխություններն է կրել։

Երկա (գրարար) — ղղձական ապառնի (բարբառ)	անցյալ անկատար (գրարար) — անցյալի ապառնի (բարբառ)
--	--

Ե խոնարհման բայեր

մմ > իմ	եմք > իմք	էի > էլի	էաք > էլաք
ես > իս	էք > էք	էիր > էլիր	էիք > էլիք
է > է	են > էն	էր > էր	էին > էլին
անեմ > նիմ	անեմք > նինք		
անես > նիս	անէք > նէք		նույնն է
անէ > նէ	անեն > նէն		

Ը խոնարհման բայեր

իմ > իմ	իմք > ինք	
իս > իս	իք > իք	նույնն է
ի > ի	ին > ին	

Ա խոնարհման բայեր

ամ > ամ	անամ > նամ	ալի > ալի	անալի > նալի
աս > աս	անաս > նաս	ալիր > ալիր	անալիր > նալիր
ալ > ա	անալ > նա	ալր > ա	անալր > նալր
ամք > անք	անամք > նանք	ալաք > ալաք	անալաք > նալաք
ալք > աք	անալք > նաք	ալիք > ալիք	անալիք > նալիք
ան > ան	անան > նան	ալին > ալին	անալին > նալին

Փոփոխությունները ի հայտ են գալիս միայն ըղձական ապառնի ժամանակների կազմության մեջ: Ինչ վերաբերում է զրարարի սահմանական եղանակի անցյալ անկատար և բարբառի ըղձական անցյալ ապառնի ժամանակներին՝ ապա նրանք մնացել են անփոփոխ: Նույնիսկ անցյալ անկատարի հոգնակի թվի առաջին դեմքի -լաֆ -ալաֆ վերջավորությունները Մալաթիայում պահպանվել են անաղարտորեն, այնինչ դրանք փոփոխվել են արդի հայերենում (էինք, այինք), և հայերենի շատ բարբառներում:

Սահմանական եղանակն ունի 9 ժամանակ, որոնցից մեկը՝ անցյալ կատարյալը պարզ է, իսկ մյուսները բաղադրյալ:

Սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են ըղձականի համապատասխան ժամանակների և ա մասնիկի հարադրությամբ (փէրիմա ա): Այդ ա-ն ահա > հա բառի կրճատմամբ առաջացած բառամասնիկ է, որը նույն դերն է կատարում, ինչ կը-ն նույնանուն ճյուղի բարբառներում: Ձայնավորով սկսվող բառերը բառասկզբին ունեն նաև կը եղանակիչը (գէրթամ ա), մի բան, որը բացակայում է բաղաձայնով սկսվող բառերում: Այստեղից կարելի է հզրակացնել, որ Մալաթիայի բարբառը սկզբում եղել է կը ճյուղի բարբառ և շարունակական ժամանակներ է կազմել ա բառ-մասնիկով: Միայն հետագայում մթագնվել է այդ մասնիկի շարունակական իմաստը և այն իր տեղը զիջել է բուն կամ սովորական ներկային: Սակայն ձայնավորով սկսվող բառերի մոտ կը-ն մնացել է անփոփոխ, հավանաբար արտասանական անհրաժեշտությամբ: Ա մասնիկը ետադաս կիրառություն ունի:

Սահմանական եղանակի ապացույց, վաղակատարի և հարակատարի երկուական ժամանակները կազմվում են համապատասխան դերբայներով և օժանդակ բայի համապատասխան ձևերի հարադրությամբ։

Անցյալ կատարյալը կազմվում է բայերի անցյալի հիմքին դիմային վերջավորություններ կցելով։ Դիմային վերջավորությունները զրաբարի համեմատությամբ հետևյալ ձևափոխություններն են կրել։

Ե խոնարհման բայեր

Եզակի	հոգնակի
ի>ի	աք>աք (անք)
եր>իր	իք>իք
—>—	ին>ին

Ե խոնարհման ածանցավոր բայեր

Եզակի	հոգնակի
ի>ի	աք>ինք
եր>իր	էք>իք
—>ալ	ին>ին

Ի խոնարհման բայեր

Եզակի	հոգնակի
ալ>ալ	աք>աք (անք)
ար>ար	ալք>աք
աւ>ալ	ան>ան

Ա խոնարհման պարզ բայեր

Եզակի	հոգնակի
ի>ի	աք>ինք
եր>իր	էք>իք
—>—	ին>ին

Ա խոնարհման ածանցավոր բայեր

Եզակի	հոգնակի
ալ>ա	աք>աք (անք)
ար>ար	ալք>աք
աւ>ալ	ան>ան

Այսպիսով՝ բարբառի անցյալ կատարյալն ունի երկու բնույթի վերջավորություններ՝ ներդործածև և կրավորածև։

Ե խոնարհման բոլոր բայերը և ա խոնարհման պարզ բայերը ունեն ներգործածակ վերջավորություններ, իսկ Ի խոնարհման բոլոր բայերը և ա խոնարհման ածանցավոր բայերը՝ կրավորաձև:

Պայմանական եղանակի ժամանակները կազմվում են ըզական եղանակին կ>զ եղանակիչը ավելացնելով: Այս եղանակի և սահմանականի ներկա ու անցյալ անկատար ժամանակների տարբերությունը արտահայտվում է ա մասնիկի գործածությամբ: Բաղաձայնով սկսվող բայերի մոտ այդ տարբերությունն ավելի որոշակի է դառնում, քանի որ սահմանականի ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են առանց այդ եղանակիչի:

Հարակատար եղանակը կազմվում է ըզականից՝ ավելացնելով պիտի> բիդի եղանակիչը: Չայնավորով սկսվող բայերից առաջ սղվում է բառավերջի Ի-ն և եղանակիչը դառնում է բիւլ. այսպես՝ բիդի փէրիմ, բիդ էրթամ և այլն:

Հրամայականն ունի երկու ձև՝ բուն հրամայական և արդևական:

Պարզ բայերի բուն հրամայականի եզակին կազմվում է ներկայի հիմքից, իսկ ածանցավոր բայերի եզակիի և բոլոր բայերի հոգնակիի բուն հրամայականը՝ անցյալի հիմքից: Այսպես՝ խաղա, բրէլ, հաթիր, մաոցիբ, հաթէբ, խաղացէբ, բրէցէբ, մաոցէբ և այլն:

Եզրակացություն—Մալաթիայի Բարբառի հոլովումն ու խոնարհումը հայդրական լեզվի (դրաբարի և արդի հայերենի) հետ համեմատության ընդհանուր եզրեր ունենալով հանդերձ, ունի նաև իր բնորոշ առանձնահատկությունները, որոնցով էլ այդ բարբառը տարբերվում է մյուս բարբառներից: Այդ առանձնահատկությունները (և ոչ միայն նրանք) բարբառի ինքնուրույնության կուլաններն են: Նրանց ակունքը այսպես թե այնպես հայոց լեզուն է, նրա պատմության որևէ շրջանը: Չնայած Մալաթիայի հայերը դարերի ընթացքում ենթարկվել են օտար իշխողներին, որոնք բունի ուժով պարտադրել են իրենց մայրենի լեզուն և հարկադրել ձուլման ենթարկվել, այնուամենայնիվ Մալաթիայի բարբառը, իրեն հայոց լեզվի ճյուղավորումներից մեկը, մնացել է հայերենին հարազատ, և նրա քերականության զարգացումը ընթացել է հիմնականում հայոց լեզվի ներքին օրինաչափությունների զարգացման ուղղությամբ: Այս առումով անհրաժեշտ է Մալաթիայի բարբառի ամբողջական ուսումնասիրությունը, որովհետև այն կօղնի հայոց լեզվի պատմության դժոխս շուտամասիրված շատ հարցեր լուսաբանելուն:

СКЛОНЕНИЕ И СПРЯЖЕНИЕ В МАЛАТИЙСКОМ ДИАЛЕКТЕ

Т. С. ДАНИЕЛЯН

(Р е з ю м е)

Малатийский диалект — один из малонизученных диалектов армянского языка. Все данные об этом диалекте в основном касались фонетики. Статья является первой попыткой краткого изложения склонения и спряжения в данном диалекте. Основной упор делается на особенностях диалектных форм.

До сих пор считалось, что малатийский диалект относится к ветви 4р. В статье показывается, что впоследствии он перешел к ветви 4а. Его

настоящее время изъявительного наклонения образуется при помощи частицы *ш*, являющейся остатком слова *шзш > зш*. Однако не отрицается и связь с ветвью *чр*, так как слова, начинающиеся с гласного звука, настоящего время образуют при помощи приставки *ч > ч* (например, *чзш-ршш/ш*).

Своеобразным в данном диалекте является то, что в творительном падеже (*ччрδшшшш зчччч*) все существительные, а также и другие части речи, подлежащие склонению, имеют окончание *ор* (*ччрδор, ччшор, шшр-рор*).